

— «Քանի ամիսէ ի վեր ոչ ցաւ ունիմ, ոչ վէրք, և արիւնս ալ «մաքուր» է, քննութիւնը ժխտական է (նեկաթիվ)։ Եթէ բան մը ըլլար, մինչև հիմայ երեւան պիտի դար»

— «Սիֆիլիսը ուրիշ հիւանդութիւններու չի նմանիր։ Ամիսներով, տարիներով լուռ կը մնայ ու յանկարծ տեղէ մը ծայր կուտայ»

— «Ուրեմն բնաւ չի՞ բուժուիր»

— «Ընդհակառակն, բուժելի հիւանդութիւն է, մանաւանդ արդի դեղերով և զօրաւոր ու երկարատեւ դարմանումով։ Փաստը այն է որ շատ մը լաւ դարմանուած ֆրանկախտաւորներ կ'ամուսնանան և առողջ զաւակներ կ'ունենան. իսկ ուրիշներ նոր սիֆիլիս կ'առնեն, ինչ որ անկարելի է, եթէ հինը բուժուած չէ։ Միայն թէ վստահարար չենք կրնար դիտնալ թէ այսինչ կամ այնինչ ֆրանկախտաւորը արմատապէս բուժուած է թէ ոչ»

— «Այս պայմաններուն մէջ ի՞նչպէս և ե՞րբ կրնաք արտօնել ամուսնութիւնս»

(Շարունակելի)

ԲԺ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԼԻՍԹԷՐԻ ԶԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ

Անգլիա վերջերս տօնեց իր հուշակաւոր զակիին՝ Լորտ Լիսթէրի հարիւրամեակը (1827-1927)։ Իրը դեռ փասթէօր չէր գտած միջրոպաներու գոյուծիւնը, գործողութեան ենթարկուած հիւանդներու մեծամասնութիւնը կը մեռնէր փտախտի (gangrene) հետեւանքով։ Լիսթէր կը խորհէր թէ օդի թթուածինն է, որ վէրքերու հետ շփման մէջ մտնելով, յառաջ կը բերեր անոնց թարախտիլը եւ փտախտը, ու միջոց մը կը փնտռէր կանխելու համար այդ ահաւոր բարդութիւնը։ Փասթէօր 1860ին ցոյց տուաւ թէ օդը չէր որ յառաջ կը բերէր բորբոքումը եւ փտախտը, այլ անոր մէջ գտնուած մանր էակները՝ մանրէները։ Լիսթէր, օգտուելով այդ գիւտէն, անմիջապէս գործադրեց իր գաղափարը, այսինքն հականեխական հեղուկներու մէջ թափախուած լաթերով արգելեց օդի մանրէներու շփումը վէրքերուն հետ, եւ յաջողեցաւ փտախտին առջեւը առնել։ Հականեխումի այդ սկզբնական գաղափարն է որ կատարելագործուելով, այսօր թոյլ կուտայ վիրաբոյժներուն աներկիւղ ընել այնպիսի գործողութիւններ, որոնց մասին սարսփով կը խորհէին կէս դար առաջ թէ հիւանդները եւ թէ բժիշկները։

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Թ Է Ի Ն Չ Պ Ա Տ Մ Ե Յ Թ Ր Է Գ Ո Ր Ե Ա Ն

ԳՐԵՑ՝ ՏՕԶԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՅԱՌԱՋԱՐԱՆ՝ ՏՕԶԹ. Վ. Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆԻ

Գին՝ Ֆրանսա 6 Ֆրանք — Եւրոպայի միւս երկիրներ եւ Սուրիա՝ 7 Ֆր. 50 — Ուրիշ երկիրներ՝ 35 սէնթ